



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Բ. — ՇՐՋԱՆ ԻԲ. 1890

ՏԱՐԻ ԻԿ. ՓԵՏՐՎԱՐ 28

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԱՂԱԳՍ ԱՆՁՆԱՄՂԱՆՈՒԹԵԱՆ.

Փրիտտոնեայ եղբարք.

Իւրաքանչիւր քարոզի նպատակն է ունկնդիրներին մէջ յա-
րուցանել համակրութիւն կամ հակակրութիւն դէպի քննու-
թեան առարկայ եղող երեւոյթը: Ներկայ քարոզիս նիւթն է
անձնաւորանութիւնը կամ մարդուս անձամբ իրան կեանքից
զրկելը:

Սա այնպիսի երեւոյթ է, որ իւր անունով միայն ընդունակ է զգուտնք յարուցանելու նոցա մէջ, որոնք հակամիտ չեն դէպի անձնասպանութիւն, բայց ես պէտք է ասեմ, որ նա աւելի վտանգաւոր է և աւելի մեծ յանցանք, քան ինչպէս սովորաբար դատում են նորա մասին:

Առհասարակ իւրաքանչիւր անհատի մեղաց մէջ յանցաւոր չէ միայն նրան գործողն, այլ և նրան շրջապատող անձինք մեղսակից են նրան, ընդհանրապէս այն կարծիքներն ևս, որոնք անդադար բաղխում են նորա լսելիքը, և հանգամանքներն, որոց մէջ նա ապրում է և այլն: Այոպէս անձնասպանութեան այս կամ այն դէպքում մեղքից ոչ ոք անկեղծօրէն չէ կարող ասել, որ ինքը բնաւ յանցունք չունի իրան օտար մի անհատի անձնասպանութեան մէջ: Մտածեցէք միայն, թէ արդեօք մենք չե՞նք նպատաւ մէկի անձնասպանական տրամադրութեան նախընթաց անձնասպանութիւնքն աշկարայ արդարացնելով, թեթեւամտութեամբ դատելով ապագայ կեանքի և վարձատրութեան մասին և կամ հէնց սահմանափակելով կեանքի նպատակը միայն ներկայ իրերաւոր կեանքով: Այո՛, իմ կարծիքովս, մենք սմեկնքս՝ ումն լռութեամբ, ումն աշկարայ համակրութեամբ դէպի անձնասպանութիւնը յանցաւոր ենք իւրաքանչիւր անձնասպանական դէպքում: Անձնասպանութեան վերաբերութեամբ մենք գտնուում ենք այնպիսեաց սարսափելի վիճակում, որոց վայ կարգաց Փրկիչն նորա համար, որ նոցա միջնորդութեամբ գայթակղութիւնը մուտ գործեց աշխարհ և որոց համար նորա իսկ խօսքերով, լաւ էր, որ երկան իշոյ կապէին իրանց լղերին և ծովի խորքը ընկղմէին: Մի խօսքով մենք հանդիսանում ենք իբրեւ գայթակղեցուցիչք անձնասպանութեան համար: Մի կարծէք թէ ես չափազանցութիւն եմ տնում, ոչ. դուք իրանդ էլ նոյնը կատէք, եթէ յիշէք, թէ ուր ենք հասել. այն տեղն ենք հասել, որ մեր օրերը մինչև անգամ երեխայք անձնասպանութիւն են գործում և խեղդամահ լինում, երեխայք, որոնք դեռ երիտասարդական հասակն էլ առած չեն: Եթէ հասակն առած անձին համար կարելի է

կործել, թէ՛ նա իրան օպանել է խելագարութիւնից, հաստատումութեան պակասութեամբ անկարող լինելով տանելու կեանքի ծանրութեանց, կամ որ և է նիւթական կորուստի և կամ պաշտօնից զրկուելու պատիւ, հրեխայ — անձնատպանի մասին ոչինչ չէ կարելի ասել բացի այն, որ նա իրան օպանել է բոլորովին չնչին պատճառով, զորօրինակ քննութեան ժամանակ միաւոր նշան ստանալով համարյա միայն հետեւելով մեծերի անձնատպանութեանց օրինակին, որոնք լռութեամբ կամ աշկարայ քաջակերութիւն են օտապած։ Ուստի և ինչ թուում է, որ յանցանքը շատ զօրացած է և քանի որ ներկայումս քննութեան աւարկոյ են դառնում մեր կեանքի բարոյապէս շատ տգեղ հրեայթիւները քարոզութեանց մէջ, ժամանակ է և անձնատպանութեան խնդիրը ամեն կողմանէ քննել։ Ներկայ քարոզչական մտադիր եմ որոշելու, թէ ինչպէս պէտք է նոյեյ այս հրեայթի վերայ, հայեցակէտ առնելով Աստուծոյ խօսքն, մասամբ էլ աչքի առաջ ունենալով պատմութեան վկայութիւնքն ու միջնակագրական տեղեկութիւնք։ Բարեպաշտ քրիստոնեայք, ես ձեզ, իմ ունկնդիրներին, որոնք և բազմաոտեսակ մղար վարդապետութեանց և ներկայ կեանքի բերմունքներէ խաւարի մէջ լոյս էք որոնում, կամենում եմ տալ ներկայումս մի բան, այն է ուղիղ հայեցողաճք անձնատպանութեան վերայ, հայեցակէտ, որով կարող լինէիք պատեհազմել ոչ միայն այդ յանցանքի կատարման դէմ, այլ և նորա համակրութեան, փորձի և մտադրութեան դէմ։ Մի համարէք այս մի աննշան գործ։ Տէրն ասում է, ով կկատարէ նորա պատուիրաններից մէկն և ուրիշներին էլ կուսուցանէ նոյնը գործել, նա մեծ կը կոչուի Աստուծոյ արքայութեան մէջ (Մատ. Ե. 20)։ Դուք ամենքդ էլ յիշելու էք, որ ձեզնից, քրիստոնեայք, իւրաքանչիւրը պէտք է լինի իւր չափով քարոզիչ արդարութեան այն մարդոց շրջանում, որոնց մէջ ապրում է։ Նրբեմն խրատական մի քաղցր խօսքն, երբեմն խիստ յանգիմանութիւնն, երբեմն էլ արդար բարկութիւնն, եթէ ժամանակին յայտնուում են թշուառ մերձաւորին, որ կանգնած է կորստեան անդուն-

դի եզրին, ընդունակ են լինում՝ պահպանելու նրան սարսափելի յանցանք գործելու դիտաւորութիւնից և առաջնորդելու նրան դէպի առաքինութեան ճանապարհը: Իսկ նոքա, որոնք որոշում են անձնասպան լինել, ոտլորաբար լինում են ամենաթշուառ անձինք: Մեծ կլինի, մեծ նորա վարձն, որ կորըստից կազատէ օտարի հագին: Այսպէս, եղբայր, յիշելով Քրիստոսի խօսքը, թէ բարձէք ընկերոջ բեռն և առաքելոց խօսքը թէ անկարողների ցաւերը բուժեցէք և ոչ անձանց միայն հոգս տարէք — երթանք անձնասպանութեան դէմ՝ իմաստուն բարկութեամբ, վրայ հասնենք նրան կենդանի ցաւակցութեամբ և հարուածենք սիրոյ խօսքերով ամինքին, ոյք թոյլ կտան իրանց ներողամտութեամբ, թեթեւամտութեամբ և որ առաւելն է համակրութեամբ վերաբերուելու դէպի այդ ծանր յանցանքը:

Անձնասպանութեան օրինակներ և ողբա բացատրութիւնք ներկայ հասարակութեանց հայեցողածքով շատ են: Ամեն ոք տեսած ու լսած է ողբա մասին, ով միայն փոքր ինչ ուշադրութեամբ հետևած է ներկայ կիանքի երևոյթներին և նրան, ինչ որ նորո՞ւ մասին խօսուում է և գրուում: Ահա մի բարձր դիրք ունեցող անձն, որ հասել է ներկայ կեանքում ամենի, ինչ որ հնարաւոր է — փառքի, նշանակութեան, հարստութեան, բայց իրա ստանձնած մի ծանրակշիռ հասարակական գործում արել է մի քանի սխալ և ահա սա իւր գործած անզգուշութեան աղտը իրանից որբելու համար, անձնասպան եղաւ: Եւ հասարակական կարծիքը, այդ անձնական դատաստանը շատ խիստ համարելով հանգերձ, գովասանութեամբ խօսում է անձնասպանի վերայ, նորա իբրեւ արդար վճռի համար իւր անձի դէմ: Ահա մի այլ անհաս, որ գիտութեան որ և է ճիւղում հասած է մարդկային իմաստութեան խորքը, ուստի ընդունակ է բիրելու մարդկութեան մեծ օգուտ, ծառայելով հասարակաց բարօրութեան, բայց գործելով մի անուղիղի սխալ ի վնաս մի մասնաւոր մարդու, իբրեւ հաւուցումն իւր սխալանաց և մարդոց առաջ խայտառակութիւնից ազատուելու համար կարծում է

իւր կենաց թելը՝ Հասարակաց կարծիքը, կենդանի ցաւակցութեան զգայմունք յայտնելով համակրելի գործիչի տարածամ մահուան մասին, նորա վարմունքը բարեխղճութեան դաս է համարում։ Ահա և երրորդ անձն, ծանրաբեռնած ընտանիքով, շատ չարքաշութեանց համբերեց կտոր հացի համար, շատ նեղութիւն քաշեց, ճաշակեց շատ դառնութիւնը և վերջապէս այնպէս յուսահատեցաւ, որ մորթեց կնոջ, զաւակներուն և իւր կեանքին էլ վերջ դրեց։ Հասարակաց կարծիքը արգարացնում է սորա վարմունքն էլ յանուն անցեալ նիւթական անտանելի վիճակի և բարոյական անյաջողութեան։ Որը արեցութեամբ վառնել է ունեցածը, որը անյաջող գտնուել է սիրոյ մէջ, երրորդը կորցրել է հարստութիւնը, մի այլը ստացել է անբուժելի ախտ, ոմն էլ աւելի լաւ վիճակի յոյս չէ տեսնում այս կեանքում — և ահա ամենքն էլ կտրում են իրանց կենաց թելը, որը երկաթուղու կառքի տակ, որը թոյնով, որը դանակով, որը ատրճանակով, որը ջուրն ընկնելով և որը խեղդամահ լինելով։ Ներկայ ժամանակի անձնասպանութեանց բոլոր եղանակներն անհնար է թուել, շատ բազմատեսակ են նոքա։ Ամենից աւելի ցաւալի է այդպիսի դէպքում հոտարակական կարծքի վարմունքը. սա սրտնում է իւրաքանչիւր անձնասպանութեան անմիջական պատճառը և գտնելով այն անձնասպանի եղեռնագործութիւնից առաջ գրած սեպհական նամակների հիման վերայ կամ անձնասպանի դիւցազնութեան մէջ, կամ նորա կեանքի հանգամանաց նիւթական և բարոյական անտանելի վիճակի մէջ, և կամ խելագարութեան մէջ — բաւականանում է դրանով և բնաւ ուշի ուշով չէ մտածում թէ արդեօք որպիսի վարդապետութեանց և համազմունքների, որպիսի բարոյական կանոնների ու գաղափարների հոյլի վերայ բուսել է կատարուած անձնասպանութիւնը։ Անտարակոյս է, որ այս կամ այն անձնասպանի մասնաւոր կեանքը ոչ ոքին չէ վերաբերում. բայց եթէ անձնասպանի համազմունքների և դաւանաբանութեանց և նորա բարոյական կենցաղավարութեան խնդիրն է գլխաւոր հարցը — այն ժամանակ սա պէտք է

վճուռի, սրով հետև այս խնդրի որոշումից կախումն ունի ընդ-
հանրապէս անձնասպանութեան պատճառների հարցը: Թելա-
գարու թիւնն, որ աւելի յաճախ համարուում է անձնասպա-
նութեան առիթ, սովորաբար ամենից քիչ պատճառ է տալիս
այդ եղանակագործութեան: Կարելի է յոյժ հաւանական համա-
րել, որ անձնասպանութեան վերջին բուլետէն մարդս իր անձի
տէքը չէ լինում և գտնուում է անբնական վիճակի մէջ,
բայց աւելի յաճախ անհնար է դրականադէս հաստատել, թէ
խելացնորութիւնն է անձնասպանութեան պատճառը, միայն
նա միշտ վերջին ոյժն է տալիս անձնասպանութեան համար:
Այն մասին թէ յանուն որ համոզմանց և բարոյական կու-
նդների անձնասպանը կարծում է իւր կեանքը հաւտոտի
կերպով կարելի է ասել միայն այն, որ անձնատղաները երբեք
իրանց դատաստանի մէջ չեն ղեկավարուում յայտնաւ կրօնի
վարդապետութեամբ և քրիստոնէական բարոյականութեան
կանոններով: Որպէս զի այս չհամարն է անփափախօք, դառ-
նանք կարեւոր վկայութեանց Յայտնութեան ձին և նոր Ուխտե-
րի Ս. Գրաց, Բայց այստեղ ինձ առաջուց մուրեքնում է այն
խնդիրը, թէ ինչո՞ւ ոչ մի անգամ բոլոր Ս. Գրքում ուղղակի
կերպով չէ դատապարտուում անձնասպանութեան յոնցանքը:
Աւելի ևս — ինչո՞ւ նորա մասին ոչ մի անգամ յիշատակութիւն
ևս չէ լինում ի շարս բազմաթիւ խրատների, մանաւանդ չին
ուխտի Յայտնութեան մէջ: Վերաբերութեամբ նրան թէ ինչից
պարտ է խոյս տալ և դէպի ինչ ձգտել: Բայց անձնասպանու-
թեան իբրև մի բարոյական յանցանքի մասին, յիշատակութիւն
անգամ չանելը Ս. Գրոց, ինձ տալիս է հիմք հաստատելու,
որ Ս. Գիրքը ոչ թէ նորա մասին չէ յիշում այն պատճառով,
որ նա մեղք չէ, ծանր յանցանք չէ, այլ ընդհակառակն, որ նա
չափազանց սորոսալիւի, հակաբնական, Աստուծոյ իրաւունք-
ները շօշափող մեղք է, որ սուրբ մատենագիրներին անհնա-
րին և անհաւատալի երևոյթ էր թուում: Ուստի և նոքա ոչինչ
չասացին իրանց խրատների և վարդապետութեանց մէջ. այս

պատճառով էլ և բոլոր Ա. Դիրքը, թէ չին և թէ նոր Աւստի
գրուածոց մէջ, ինչպէս ներքեւը կոնկրետներ, յիշատակուած
միայն անձնասպանութեան երկու թրինակէն մէկը քան
Մեր յայտնեալ կրօնի վարդապետութեան գերազանցութիւն
նր բոլոր այլ վարդապետութեանց առաջին մէջ այլոց նորոն
նուա՛ն է, որ նա չէ գնում մարդոց վերայ դժուարակիր բռն
չէ տալիս կանաններ առանց գործարարութեան և քաղաքակրթ
առանց իրագործման, ի շարք բարձր պահանջների, որ մնում
է նա մարդիկներից, նա իրական օրինակ առաջ է բերում մե
ձինք, որոնք իրագործած են իրանց վեանքում. այդ Գալիլէան
ները, Աստի և խօսելով անձնասպանութեան մասին Յայտնեալ
վարդապետութեան տեսլիկով, և և կրօնցաւորում որքան
մատենագիրների հայեցումը քննարկելով, և ցոյց
կտաւ թէ ինչպէս էին նախ քան վարդապետութեան Յայտ
նութեան, բարոյականութեան գլխաւորներն անձնասպանութ
եան միայն:

Այսպէս, այն Տէր Աստուծոյ, որ Սինայ ձաւից աստուծոցնե
լով Մի սպաններ, պատուիրանը յայտնեց, կարճէ մի թէ
նկատումութեամբ վերաբերիլ գէտի անձնասպանութիւնը
Անհարին է: Այս օրէնքով արգելուում է որքան օտար անձի
սպանութիւնն, նոյնքան և անձնասպանութիւնն, այս պատուի
բանն արգելում է մարդասպանութիւնն առհասարակ լինի դա
օտար մարդու, թէ իմ անձիս սպանութիւնը: Եթէ այդ պա
տուիրանը վերաբերուէր միայն օտարի, մերձակորի սպանու
թեան, անաստիպոյ աւելացրած կլինէին Մի սպանաներ զնիկ
+ խօսքերը, ինչպէս իններորդ պատուիրանում ասած է, «մի
սուտ վկայեր զնիկէ +» որովհետեւ այս յաւելուածը վե
ցերորդ պատուիրանում արած չէ, ուստի և իրաւայի է նորոն
մէջ տեսնել արգելումն ամեն տեսակ սպանութեան, նոյնպէս
անձնասպանութեան:

Բայց ի՞նչ է անձնասպանութիւնը: Նա մարդու անձնական
գաղափարի գործողութիւնն է, որով նա զրկում է իրան կեան
քից: Պարզ չէ, որ այստեղ մարդը յափշտակում է Աստուծոյ

իրաւունքը: Հին Ուխտի Ս. Գրոյ մէջ ամենուրեք այն միտքն է յայտնած, որ մարդուս կեանքը Աստուծմէ տուած է. Աստուած ստեղծեց աւառին մարդոց, Աստուած էլ պոռժում է մարդոց ամլութեամբ կամ վարձաւորում է բազմաճնութեամբ: Ուստի ով որ, ստանալով կեանք Աստուծմէ, զրկում է իրան նրանից, նա շօշափում է աստուածային իշխանութեան իրաւունքն և իւր գլխին կուտում է Աստուծոյ արդարութեան պատիժները: «Տեսէք, տեսէք, ասում է Տէրը, զի ես եմ և չիք այլ որ բաց յինէն, ես սպանանեմ և ես կեցուցանեմ» (Երկրորդ Օր. գլ. 1. Բ. 39): Ս. Գրքում շատ յաճախ է կրկնուում այս միտքը, որ վկայում է թէ Հին Ուխտի մարդիկ այն գիտակցութիւնն ունէին, որ Աստուած միայն իրաւունք ունի մարդուս մահուան վերայ: Ահա և Աննա մարգարէուհին, Սամուէլի մայրը, իւր մարգարէական աղօթքում Աստուծոյ տուած ասում է. «Տէր մեռուցանէ և կեցուցանէ, իջուցանէ ի դժոխս և հանէ»: (Առ. Թագ. գլուխ Բ. 6): Ահա և Սողոմոն թագաւորն, որին Աստուած տուեց այնպիսի միտք բանական և իմաստուն, որ նրանից իմաստուն թագաւոր ոչ եղել է և ոչ կլինի, այս Սողոմոնը դառնալով դէպի Աստուած ասում է, «Քանզի կենաց և մահու դու ունիս իշխանութիւն, իջուցանես ի դժոխս և հանես», (Իմաստ. Սողոմոնի. գլ. ԺԶ. 13):

Ուրեմն միայն Տէր Աստուած և միմիայն նա է իշխան մարդու մահուան: Այս գիտակցութեամբ արդեօք վարե՞ն են իրանց կեանքը Հին Ուխտի արդարներն: Այս խնդիրը լուծելու համար յիշենք միշտ խրատական պատկերն Հին Ուխտի այն արդար մարդու, որոյ մասին ինքն Աստուած ասաց. «Ոչ գոյ իբրև զնա ի վերայ երկրի այր անարատ՝ ճշմարիտ՝ աստուածապաշտ մեկնեալ յաւենայն իրաց չարաց» (Յովբ. գլ. Ա. 8), մի խօսքով յիշենք Յոբին: Եւ իբրաւի բազմաչարչարը պատկեր է արդար մարդու թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքում: Անսահման հաւատով առ Աստուած և երկիւղած նրանից, արդար ամեն վարմանց մէջ, նա կենդանի քաջալերութիւն էր բարեպաշտ անձանց համար և յանդիմանութիւն էր չարերի

Համար, սարսափ էր յոնցաւորաց և պաշտպանութիւն թոյլերի, այրիների և որբերի համար: Նա այնպէս մեծ հոգս էր քաշում իւր զուակայ քարուղ մաքրութեան համար, որ ամեն օր խնջոյքից յետ Աստուծոյ զոհ էր բերում նոցա համար, երկընչելով թէ մի գուցէ մեղանչած լինին նորա զուակները և չար մտածած ընդդէմ Աստուծոյ: Եւ Տէր Աստուածն, որ տեսնում է ոչ միայն մարդերին, այլ և մեր խորհուրդներին հասու է, վարձատրեց Յուրին: Արարիայում, ուր բնակում էր արդար Յորը, չկար նրանից պատուաւոր, հարուստ և բազմաւոր մարդ: Բայց ահա Յուրի սրբազան կենսագիրը լաց է անում վարագոյրն, որ ծածկում է մեր այքերից Աստուծոյ նախախնամութեան անհասանելի ճանապարհներն և սատանայի չարիքն, որ թշնամի է արդարների: Յորը տակաւ առ տակաւ զրկուում է ամենից—հարստութիւնից և ընտանիքից վերջապէս եւ առողջութիւնից: Նա բորոտւում է և նորա հետ միասին անպատիւ լինում, սրովհետեւ, պէտք է գիտենալ, որ բորոտներն արտաքսուում էին եւ մարդկային ընկերութիւնից: Ներկայ անձնասպաններն և հոսարակական կարծիքը սիրում են բացատրել անձնասպանութեան պատճառները մարդու կենաց ծանր հանգամանքներով, նորա անկմամբ, նորա անուանարկութեամբ յաջա մարդկան ևլի:

Բայց նույնքէք թէ ինչպէս է վարուում այժմ յիբաւի ամենաթշուաւը մարդկայնից՝ աղքատ, ընտանիքից զրկուած, հիւանդ և յաջա մարդկան խայտառակուած բազմաչարչար Յորը: Մինչև նորա հեռանալը մարդոց բնակարաններից, ըստ Ս. Գրոց վկայութեան, «Ոչ մեղաւ Յուրի շրթամբք իւրովք առաջի Տեառն և ոչ ետ անզգամութիւն Տեառն», և ոչ թէ մտածեց անձնասպան լինել: Ահա աղբււրում նստած, որից մինչև գլուխ կեղով ծածկած, խեցիով քերում է թորախը: Նորա բարեկամներն եկան մխիթարելու նրան, լայց իսկապէս ցաւ նորա ցաւոց վերայ աւելացնելու համար: Նոքա կասկած տարան, թէ նա մեղանչած է. ուստի և Աստուած այդպէս խտրութեամբ պատժել է նրան. և այդ կասկածը արդար Յո-

քի համար, որ անկարող էր արդարացնել իրան նոցա առաջ, պատժից աւելի ծոնք էր: Աերջապէս գալիս է նորա մօտ նորա խեղճ կինն, որ կոտոր հացի կարօտ մնացել էր և իւր ձեռքերի աշխատանքով ստիպուած էր վասնակել օրական պարէնը: Նա աւելի ևս թշուառ էր այն պատճառով, որ ճաշակելէ բարձրութիւն ունեցել էր հարստութիւն և մեծացրել էր զաւակները, որոնց խել էր նրանից չար մահճ: Նա յանգիմանում է իւր ամուսնուն, նորա հիւսնադմութեան համար, սուաօտից մինչև գիշեր իւր քաջած ծանր աշխատութեանց համար օտարների դռներում և վերջապէս ասում է: «Մինչև յերբ փռեկալի առիցես, ահա համբերեցից անկաւին սակաւ ինչ ժամանակ ակն կալելը յաւոյ փրկութեան իմոյ: Այլ ասա բան ինչ ի Տէր և վախճանեաց» (Յօբ. ք. Բ. 9-10): Աեր խնդիրը հէնց այս անմիտ «վախճանեաց» (մեռիք) խօսքի մէջ է: Ի՞նչ է բովանդակում այս Բօթի խօսքն իր մէջ, եթէ ոչ միայն յորդոր և քաջալերութիւն անձնատգանդութեան համար: Ծանր է վիճակը իմն էլ պակաս է, ուզում է ասել Յօբի կինն, ազատիր քեզ տանջանքից և խայտառակութիւնից, ինչ էլ քո ամուսին լինելից, ասա բան ինչ ի Տէր (խօսիք Աստուծոյ հակառակ) և վաղճանեաց: Ի՞նչ է պատասխանում նրան բազմաչարչարը. «Իբրև զմի ի կանանց անզգամաց խօսեցանք եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն, չարեաց ոչ համբերեցեմք: Եւ յայսմ ամենայնի, որ ինչ անցք անցին ընդ նա, ոչ մեղաւ Յօբ շրթամբք իւրովք առաջի Տեառն և ոչ ետ անզգամութիւն Աստուծոյ» (Յօբ. ք. Բ. 10): գրում է նորա կենսագիրը: Այսպէս ներկայ կեանքի թէ բարիք և թէ չարիք ոչ առանց կամաց Աստուծոյ են — առաջինն իրու վարձատրութիւն և երկրորդն իբրև փորձ: Նա որ ճաշակել է բարիք կեանքում — բայց ճիւրան չէ ճաշակել — պէտք է համբերութեամբ տանէ և չարեաց, մինչև իսկ առանց մտածելու անձնասպանութեան վերայ — ահա բարոյական եզրակացութիւն արդար Յօբի բոլոր կենցաղավարութիւնից, ուստի իմ անդամս Ս. Գիրքը: Աեր քրիս-

առնէական կրօնի հիմնադիր Աստուածամարդ Յիսուս Քրիստոսի աստուածային անձնաւորութեան մէջ մեծ գտնումներ եւ անարատ սրբութիւն վարդապետութեան եւ բարձրագոյն — կոտորեալ իրագործումն բարոյական գաղափարի նորա կեանքում: Նորա խօսքն երբէք ընդդէմ չէր գործին, ընդհակառակն գործը մարմնացումն էր բանաւոր խրատների: Նա ուսուցանում էր մեզ, երջանկութիւն խոստանալով, լինել աղքատ հոգւով, սգաւոր, հեզ, սուրբ սրտով, խաղաղարար, հալածեալ վասն արդարութեան (Մատ. գլ. Ե. 3—12) և ինքն էր օրինակ այս ամեն առաքինութեանց՝ այն է հոգւով աղքատութեան՝ անարատ մարմնաւոր աղքատութեան, հեզութեան, խաղաղասիրութեան, հաստատամտութեան, ճշմարտութեան — արդարութեան: Նա ուսուցանում էր համբերել, ասելով «որ համբերեցէ իսպառ՝ նա կեցցէ», (Մատ. գլ. Ժ. 22) և ինքն էր առաջին կամուսնոր չարչարուողը, իւր ծննդեան օրից մինչև մահը խաչի վերայ: Նա սովորեցրեց մեզ այն մեծ սէրը առ մերձաւորս, որոյ բարձրութիւնն արտայայտուում է Սիրեցէք զմիմանս, խօսքերի իրագործման մէջ և ինքն առաջինը իւր կեանքը դրեց բոլոր մարդոց փրկութեան համար:

Մեր Տէրն, սր բարեհաճեցաւ մեր փրկութեան համար իջնել երկնքից, ինչպէ՞ս է վերաբերուում նա դէպի անձնապանութիւնը: Նա պարզապէս ասաց, որ ոչ թէ եկել է Հին Ուխտի օրէնքը լուծանելու, ու լրացնելու համար (Մատ. գլ. Ե. 17), այն է աւելի բարձրացնել այն և հոգի նրան ներշնչել: Ուստի և Հին Ուխտի «Մի սպանանէր պատուիրանը» նա սրբագործում է հոգւոր մտքով: Նա ոչ միայն «Մի սպանանէր» ասում է, այլ և մի ստորացնէր քեզ բարկութեամբ, մերձաւորիդ մի վերաւորի, նրան մի անպատուի, իբրեւ յիմարի, Աստուծոյ պատկերից զրկուածի: Եթէ այսպէս զգուշութեամբ, յարգանք պէտք է վարուել մերձաւորի հետ, ի՞նչպէս կարելի է ինքն իրան ստորացնել այնքան, որ զրկէ մարդ իւր անձը կեանքից: Տէրը պատուիրեց, «Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո» (Լուկ. գլ. Ժ. 27): Այս պատուիրանի մտքով սէրն առ ընկեր

պիտի նմանի այն սիրոյն, որ մարդս ունի դէպի իւր անձը: Իսկ երբ Տէրը չէ ջնջում մի սպանաներ, ուրիշն պատուիրանը, յանուն սիրոյ առ նա, որ նման է սիրոյ առ անձն իւր, ի՞նչ պէտք կարելի է սպանել իւր անձն: Ո՞ր է անձնապաշտի անհրաժեշտ սէրը դէպի իւր անձն, որոյ հետ նա պէտք է համեմատէ իւր սէրն առ մերձաւորն՝ եթէ նա այնպէս է սիրում իրան, որ զրկում է իրան կեանքից—այստեղից եզրակացնելու է, որ նա պէտք է սիրէ և ուրիշներին, զրկելով նրանց էլ կեանքից: Բայց մերձաւորի սպանութեան հակառակ են թէ աստուածային և թէ մարդկային օրէնք և դեռ ոչ ոք չէ ասած, որ այս ինչ անձը բարիք գործեց մերձաւորին, որ զրկեց սրան կեանքից: Իսկ եթէ անօրէնութիւն է մերձաւորին սպանելն, ուրեմն աւելի ևս օրինաց հակառակ է իր անձը սպանելն, իբրև թէ կեանքի անտանելի թշուառութեանց, աղքատութեան, ընտանեկան ցաւերի, հասարակական խայտառակութեան և այլ պատճառներով:

Այստեղ պէտքէ ասել, որ օրինաց հակառակ չէ մահ ընտրելն իւր անձին հաւատոյ համար՝ կամաւոր մտրտիրոսութիւնը, կամ մերձաւորների օգտի համար, իբրև անձնազոհութիւն: Յիսուս Քրիստոս, իբրև Աստուած կարող էր ազատիլ մահից. բայց նա կամայ մահ ընտրեց մարդոց վրկութեան համար, երբ հասաւ նորո մահուան ժամանակը: Բայց և նա և առաքելները, նոյնպէս յետագայ մարտիրոսներն ու նահատակները Քրիստոսի հաւատի համար, երբ անհրաժեշտ չէին համարում անպտուղ տանջանքներն, երբ նոցա կեանքը դեռ աւելի թանգ էր յօգուտ մերձաւորների, քան մարտիրոսական մահը, խոյս էին տալիս մահից. Ինքն Յիսուս Քրիստոս մի քանի անգամ թագնուեցաւ իւր կատաղի հակառակորդներից, որպէսզի պահպանէ իւր կեանքը (Ղուկ. գլ. Դ. 29-30):

Նա և իւր առաքելներին խորհուրդ տուեց հեռանալ ուրիշ քաղաք, եթէ մեկում նրանց հալածեն (Մատ. գլ. Ժ. 23): Ուրեմն և անձնազոհութիւնն էլ այն ժամանակ արժանի է այդ անուան և մեծ առաքելութիւն է, երբ նա նպատակայարմար

է, երբ նա գործ է դրուում Քրիստոսի սիրոյ առ մերձաւորս պատուիրանը կատարելու համար, մինչև իսկ կեանքը դնելու չափ: Դժուար թէ մէկը յանձն առնու Վիճելու, որ ոչ մի անձնասպանութիւն չէ կրում իւր մէջ քրիստոնէական անձնազոհութեան մինչև իսկ ստուերը:

Բայց եթէ մեկը, յաւիշտակուելով անձնասպանների գիւցաղնութեամբ, ի դէպս անձնասպանութեան որ և է թերութեան պատճառով պաշտօնաւարութեան մէջ կամ յանցանաց պատճառով դէպի մի անհատ կամ մի հասարակութիւն, եթէ մեկը, ասում ենք, համեմատե անձնասպանութիւնը քրիստոնէական անձնազոհութեան հետ, թող այդպիսին յիշէ Յիսուսի Քրիստոսի գիւցաղնութիւնը, Նորա աւաքելոց գիւցաղնութիւնը, մարտիրոսների գիւցաղնութիւնն և ամաչի իւր սրբապիղծ մոլորութեան համար, իրաւ է, նոքա հառաչում էին այն դրութեան համար, որոյ մէջ գտանուում էին ապրելով երկրիս վերայ, հառաչում էին ասելով ես, թշուառ մարդ եմ: Ո՞վ կազատէ ինձ այս մահկանացու մարմնոյ կապանքներից, բայց նոքա երբեք իրանք չէին փախչում այդ գերութիւնից, այլ ընդ հակառակն խղում էին մեղաց և գայթակղութեան շղթաները, որ ամենուրեք նոցա վերայ դնում էին, որպէս զի երբ Տէրը կկանչէ նրանց իւր մօտ, Քրիստոսի հետ լինին երկնքում: Ինքը Տէրը թէ այս և թէ ամեն վերաբերութեամբ է մեղ ամենաբարձր օրինակը: Ապրելով երկրիս վերայ նա տանջուում էր այնպէս, ինչպէս ոչոք չէ տանջուել: Մանրաբեռնեալ ամբողջ մարդկութեան մեղքերով, առ ժամանակ թողած Աստուծմէ, այնպէս որ մինչև անգամ Խնքը գոչեց « ընդէր թողեր զիս », նա էլի երբեք չմտածեց կեանքի անտանելի լինելու մասին, կեանքի որ Աստուծո՞ւ է տուել, աւելի ևս չմտածեց նորա մասին, որ ազատուի այդ կեանքից: Նա, որդարեւ, աղօթեց, որ եթէ հնար է անցնի չարչարանայ բաժակը Նրանից, բայց և աւելացրեց. « Բայց ոչ որպէս ես կամիմ, Հայր, այլ որպէս Դու, եղիցին կամքքո »: Ահա, եղբարք, օրինակ համբերութեան տանելու կեանքի խաչը (տանջանքը), օրինակ հնազանդութեան Հօր մինչ-

և ցմահ և այն ցմահ խաչի:

Իրանց վարդապետի և Տիրոջ օրինակին հետևելով ապրեցան և Քրիստոսի աշակերտները: Եւ ո՞վ կարող է երկբայիլ, որ նոքա հեռու էին անձնասպանութեան յանցաւոր գաղափարից, թէեւ ամեն ոք գիտէ որ նոցա կեանքը, իբրեւ գառներ զայլերի մէջ—հեղերի կատաղի հեթանոսների մէջ, թեթեւ չէր: Ահա հեթանոսաց առաքեալը բոլոր աշխարհի առաջ, ի դէմն Կորնթացւոյ, որոնք չէին կարող իրանց հոգեւոր հօր ճշգրիտ վիճակը չիմանալ, վկայում է ասելով, «ինձ այսպէս թուի, թէ զմեզ զԱռաքեալս յետնորդս արար Աստուած, իբրեւ զմահապարտս, զի տեսիլ եղեաք աշխարհի և հրեշտակաց և մարդկան... մինչև յայսօր ժամանակի և քաղցեաք և ծարաւեցաք և մերկ գնացաք և կուփահարեցաք և անհանգիստ եղեաք և աշխատեցաք ձեռօք մերովք, բամբառէին զմեզ օրհնէաք, հալածէին՝ յանձն առնուաք, հայհոյէին՝ աղաչէաք, իբրեւ առակ նշաւակի եղեաք ամենայն աշխարհի, ամենեցուն վարելի լինիլ մինչև յայժմ» (Առ. Կորնթ., գլ. Գ. 9—13):

Իրաւ որ տասն և ութը դարերից յետ էլ այս խօսքերն ամենալաւ յանդիմանութիւնն են ամօթալի անձնասպանութեան որովհետեւ առաքեալների նման կեանքի ամեն տեսակ չարեաց յալթելը մարդոց հայհոյանաց և զրպարտութեանց օրհնութեամբ, հալածանաց—համբրութեամբ, չարաբանութեանց—աղօթքով և այլն—կնշանակէ ազատել իրան թէ անձնասպանութիւնից և թէ պատրաստել իրան երջանկութիւն ապագայ կեանքում: Կամենում էք այժմ իմանալ թէ ինչպէս էին վերաբերուում առաքեալները դէպի ուրիշների փորձը, իրանց անձը սպանելու համար, նայեցէք Պօղոս առաքեալի վերայ: Ահա նա իւր Շիղա աշակերտի հետ, հարուածուած, վիրաւորուած, շղթայակալ բանտարկուած է Փիլիպպէ քաղաքում (Մակեդոնիայում): Կէս գիշեր է՝ սուրբ բանտարկեալները աղօթում են Աստուծոյ, սաղմոսներ երգելով: Բանտարկեալ յանցաւորների այսպիսի անտուր վարմունքը մինչև իսկ բանտարկեալների հետաքրքրութիւնը շարժեց: Նոքա գրաւուեցան հրեշալի

բանտարկեալների սուրբ երգով:

Յանկարծ երկրաշարժ եղաւ, այնպէս որ շարժեցան և բանտի հիմունքը, դռները բացուեցան և ամենքի կապանքները (շղթաները) լուծուեցան: Բանտապետն երբ զարթեցաւ քնից և տեսաւ բանտի դռները բաց, կարծեց թէ բանտարկեալները փախել են, քաշեց իւր սուրն և կամենում էր իրան սղանել, բայց Պօղոս բարձրաձայն գոչեց՝ քո անձիդ չար մի գործեր, մենք ամենքս էլ այստեղ ենք (Գործք, Առ. գլ. 19): Սրանից յետ ո՞վ կարող է ասել, որ անձնասպանութիւնը յանցանք չէ, չարիք չէ, թէև նա արդարանալիս լինէր այն սլատճառով և համազմամբ, որպիսին ունէր բանտապետը, որ վախենում էր պատասխանատուութիւնից բանտարկեալների փախուստի համար, որ կարող էր կոտարուիլ և ոչ ոսրա անդգուշութեամբ:

Դառնանք դէպի մարտիրոսները: Նշանաւոր է, որ մինչդեռ հեթանոսութիւնը, գոտանուելով իւր աշխարհային զօրութեան, հարստութեան և փառաց գաղաթնակերտի վերայ, առաջ բերեց բազմաթիւ անձնասպաններ—առեցնալ, աղքատ, հալածեալ քրիստոնեայք պատրաստ էին բարձրանալ խարոյկի վերայ, ընկնել առիւծների ժանիքների, սրոյ և երկաթեայ սղոյցների տակ և երբեք անձնասպան չէին լինում: Լսեցէք էլի Առաքեալի խօսքը, որով նա պատկերացնում է քրիստոնեայ մարտիրոսների դիւցազնութիւնը. Ահա նորա «Որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերնոյ սրոյ . . . : Կէող կռշկոճեցան . . . և կէսը զտանջանաց և զգանից փորձ առին, զկապանաց և զբանտից, քարկոծեցան, սղոյցեցան, փորձեցան, սղանմամբ սրոյ մեռան, շրջեցան լաշկամաշխօք և մորթուք այծենեօք: Կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, զորս ոչ արժէ աշխարհս. յանսպառի մկորեալք և ի լերինս և յայրս և ի փապարս երկրի» (Եբր. գլ. ԺԱ, 33—38): Այսպէս նորա յաղթեցին թագաւորութեանց, ստացան աւետիք, զօրեղ էին պատերազմում և ի փախուստ դարձուցին օտար գնդերը:

Ահա ճշմարիտ դիւցազնութիւնն երկրիս երեսին, համբերութեամբ ընթացողք ի պատերազմ, որ առաջի կայ: Հայեսոցն է զօրագլուխն հաւատոց և ի կոտորիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն, որ նմա առաջի կայր՝ յանձն առ զխաչն, որ համարհեաց զամօթն (Եբր. ԺԲ, 1—2): Արդեօք այս ճշմարիտ դիւցազնութեան առաջ չէ՞ խաւարում անձնասպանութեան կեղծ դիւցազնութիւնն, ինչպէս ծխող կիսայրեալ վայտը հրդեհի պայծառ լուսի առաջ: Զէ՞ թուում արդեօք նա, որ երբեմն քաջութիւն է հրատարակուում, ստոր վատութիւն, փախուստ պատերազմի դաշտից և որպիսի պատերազմի, այնպիսի պատերազմի, որ յերջ ի վերջոյ պէտք է տայ արդարութեան պսակ, իրաւունք ժառանգելու յաւիտեակեան կեանք: Եւ ո՞ւր է անձնասպանների սէրը դէպի մարդիկ, որոյ մասին երբեմն խօսում են: Յիրաւի, այդ — սէր է միայն խօսքով և ոչ գործով և արդարութեամբ, ըստ որում անձնասպանները, փոխանակ գործով սիրելու մերձաւորներին, անխղճութեամբ թողնում են նրանց այս կեանքում, իրանք հեռանալով այն աշխարհ, ուր գնում են ամենքն առանց վերադառնալու:

Իո՞րոր մինչև ցայժմ ասածներից կարելի է տեսնել, թէ որքան ընդդէմ է անձնասպանութիւնը քրիստոնէական ճշմարտութեան և առհասարակ Յայտնութեան կրօնի ոգւոյն: Այս պատճառով եկեղեցւոյ Ա. հարք և վարդապետը միշտ պախարակել և յանդիմանել են անձնասպանութիւնն, այն աւելի մեծ յանցանք համարելով քան օտարին սպանելը: Ինչպէս որ մեր կոմսաւոր ցանկութեամբ աշխարհ չենք եկել, նոյնպէս չունինք իրաւունք հեռանալու այնտեղից, առանց գիտութեան և կամաց նորա, որ մեզ ուղարկել է այստեղ: (Օգոստինոս) ասում էին նորա: Ուստի և Ա. եկեղեցին, հաւատարիմ քրիստոնէական ճշմարտութեան վարդապետութեան և ոգւոյն, յանդիմանում է անձնասպանութիւնն, զրկելով եկեղեցական կարգով թաղումից նրանց, որոնք գիտակցաբար անձնասպանութիւն են գործում: Այս պատճառով էլ անշուշտ ամեն ճշմարիտ քրիստոնէին, որ աւելի կամ պակաս ճշմարտութեան հոգին ունի իւր մէջ,

ղզուելի է անձնասպանութիւնն իբրեւ ամենաչար գործ, որ անձնասպանի գլխին կուտում է երկնից բարկութիւնը:

Այժմ մնում է մեզ վճռել նշանաւոր խնդիր, թէ որպիսի դաւանութեանց և բարոյական համոզմանց հիման վերայ, որպիսի կենցաղաւարութեան և վարուց առթիւ կատարուում է անձնասպանութիւնը: Սորա համար առաջ բերենք մեր յիշողութեան մէջ Աստուածաշնչի մէջ յիշուած անձնասպանութիւնքը: Հին և նոր Ուխտի ս. գիրքը մեզ մատնացոյց է լինում միայն երկու անձնասպանների վերայ՝ Իսրայելացւոց Սաւուղ թագաւորի և Քրիստոսի աշակերտ Յուդայի վերայ: Խօսելով նոցա մասին մենք կտեսնենք թէ Աստուծոյ խօսքն ինչպէս է թէ նոցա և թէ նոցա անձնասպանութեան վերաբերութեամբ: Սուքա երկուսն էլ մինչև իրանց անկումն առանձնապէս Աստուծոյ շնորհաց արժանացած անձինք էին:

Սաւուղը հասարակ Իսրայէլացու որդի էր: Երբ Իսրայէլացիք խնդրեցին Աստուծմէ իրանց թագաւոր, Սամուէլ մարգարէի միջնորդութեամբ, Տէրը Սամուէլի ձեռքով օծեց Սաւուղին նրանց թագաւոր: Այսպէս Սաւուղը դարձաւ Աստուծոյ ժողովրդեան գլուխ—պատիւ, որին շատ քիչ ընտրեալներ արժանացան: Օժման հետ տրուեցան նրան Հոգւոյն Սրբոյ շնորհքները—շնորհք մարգարէութեան, իմաստութեան, և զօրութեան: Աստուած նրան խոստացաւ, որ, եթէ նա հաւատարիմ կլինի իւր հորց Աստծուն, գահը միշտ հաստատ կմնայ նորա և նորացելի մէջ: Անձնականի հետ նրան խոստացուեցաւ և ժառանգական երջանկութիւն: Բայց ի՞նչպէս Սաւուղ երախտագէտ եղաւ Աստծու այս շնորհքների համար: Իւր թագաւորելից յետ նա երկիցս չկատարեց Աստուծոյ կամքը, իւր յանցաւոր կամքը նորա փոխարէն առաջ տանելով: Մի անգամ պատերազմից առաջ նա ինքն անձամբ զոհ բերեց, մինչդեռ այդ Սամուէլի գործն էր, որ դորա համար խոստացել էր գնալ Իսրայէլացւոց բանակը. միւսանգամ, համաձայն Աստուծոյ հրամանին, պատերազմում չլնջեց Ամաղեկացւոց՝ իրանց բոլոր գոյքերով, նորա համար, որ երբեմն նոքա անապատում յարձակուել էին Իսրա-

յէլացւոյ վերայ—այլ խնայեց նոցա Ագազ թագաւորին և սորա ընտիր խաշներին, ջնջելով միայն անպիտանները: Եւ որովհետեւ չհնազանդեցաւ Աստուծոյ ձայնին, այլ շահասիրութեան հետեւեց, խստութեամբ յանդիմանուեցաւ Սամուէլից և Աստուած թողեց նորան, դատապարտելով ջնջման իւր բոլոր գերդաստանով: Թողած իւր կամապաշտութեան համար, որ անարգեց Աստուծոյ կամքն, և իւր աշխարհային ընչասիրութեան համար, որով խնայեց Ագազի ընտիր հօտերը, հակառակ Աստուծոյ կամաց—Սաւուղ ընկաւ հոգեկան խղճահարութեան մէջ, որ նման էր խելագարութեան, գործեց նոր յանցանք՝ դիմեց վըհկութեանց, կատաղեցաւ մարդոց դէմ և յուսահատեցաւ:

Այսպէս, Սաւուղին պատահած դէպքում մենք տեսնում ենք, որ նոյն իսկ նորա խելագարութիւնն, ինչպէս անշուշտ կանոնանեն նորա հիւանդութիւնը ներկայ գիտնականները, գոյութիւն չունէր նորա գործով անհաւատութիւնից և Աստուծոյ կամքը չկատարելից առաջ, այլ եղաւ միայն ծնունդայն սարսափելի յանցանքների: Ուստի, ոչ թէ խելագարութիւնն, այլ անհաւատութիւնն և յանցաւոր կամայականութիւնն և վերջ ի վերջոյ յուսահատութիւնն եղան պատճառ Սաւուղի անձնասպանութեան, երբ նա վիրաւորուեցաւ պատերազմում Փղշտացւոց դէմ և չկամենալով կենդանւոյն ընկնել թշնամեաց ձեռքն, ընկաւ իւր սրի վերայ: Եւ մեռաւ Սաւուղ յանօրէնութիւնսն իւր, զորս անօրինեցաւ ի Տէր, ըստ բանին Տեառն . . . (Ա. Մհաց. փ. 13), ելի «Եւ ոչ խնդրեաց (Սաւուղ) զՏէր և սպան (Տէր) զնա» (Նոյն—14): Ահա արդար դատաւիճիւ բոլոր նախկին և ավագայ անձնասպանների համար, նոքա իրանց ձեռքը բարձրացնում են իրանց անձանց վերայ, իրանց յանցանքների պատճառով, որովհետեւ մոռանում են Աստուծոյ. Սրան չեն որոնում ոչ իրանց մոռածմանց մէջ և ոչ էլ կեանքում:

Սոյն վիճակն ունեցաւ և Յուդա: Նա չվայելեց մեր Տիրոջ Յիսուսի Գրիստոսի շնորհքները. նա արժանացաւ Սորա մեռաւոր աշակերտներից մէկը դառնալու, նորա սիրալիր վար-

դասկետութիւնը լսելու, մասնակցելու նորա գործերին և ճանապարհորդութեանց. սեղանակից նրան եղաւ: Որքան մեծ էր Տիրոջ սէրը դէպի նա, այնքան էլ մեծ եղաւ Յուդայի ապերախութիւնն առ նա: Նորա Տիրոջ մատնելն այնքան սարսափելի է, այնքան սուր և անհաւատալի, որ անտարակոյս, ցվերջ ժամանակաց խորիմաստ աստուածաբանների քննութեան առարկայ կմնայ: «Սատանայ եմուտ ի նա (ի Յուդա) (Յով. գլ. ԺԳ. 27) — մի ոմն ի ձէնջ (Տիրոջ աշակերտներից) սատանայ — այսպէս է ասած Աւետարանում Յուդայի մասին: Եւ անտարակոյս այն զղուելի մատնութեան գործում Յուդան գործիք էր մարդկային ազգի սկզբնական թշնամու ձեռքում, որի գլուխը ջախջախելու համար էլ երկրիս վերայ իջաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս: Բայց որովհետեւ ամեն մեղքի և հղեռնագործութեան մէջ չէ կարելի բոլոր յանցանքը փորձիչի վերայ միայն դնել, այլ նոցա նշանաւոր մասն էլ վերաբերելի է եւ իրան մարդուն, ուստի և մատնութեան գործում Յուդան ինքն էր մեծ մասամբ յանցաւորը: Ինչից նա մատնիչ դարձաւ: Աւետարանը պատասխանում է մեզ և տալիս է մեզ միջոց բացատրելու անձնասպանութեան պատճառը համաձայն Հին ուխտի Ս. Գրոց — թէ Յուդային մատնիչ արաւ շահախնդրութիւնը: Նա գող էր, նկատում սո՛ւրբն Յովհաննէս (գլ. ԺԲ. 6) և արկղն ինքն ունէր, ուր գցուում էր Քրիստոսի աշակերտներերին պատկանած բոլոր դրամը, որոյ մի մասը գողանալիս է եղել: Յուդան չարութեամբ բողոքեց Սիմոն բորոտի տանը Մարիամի աղնիւ վարմունքի դէմ, որ մի շիշ թանգազին աղնիւ իւզով օծեց Յիսուսի ոտներն, ասելով թէ աւելի լաւ չէ՞ր լինիլ այդ իւղը մեծ գնով ծախել և դրամը աղքատներին բաժանել, բայց իսկապէս նա ցաւում էր, որ իրան չյաջողեցաւ այդ գումարի մի մասն իրան սեպհականել (Յովհ. 1, Բ) և նոյն Յուդան վաճառեց Յիսուսին հրեսուն արծաթով. այս գումարի նուազութիւնը ցոյց է տալիս նորա սարսափելի արծաթախրութիւնն, որ չէ քաշուում փոքրից էլ և գուցէ զարթուցանում է նորա մէջ յոյս, որ իւր մատնած Տէրը կաղատուի թշնամիներից և այն

Ժամանակ ինքն առիթ կունենայ և երկրորդ անգամ մատնելու նրան: Ի՛նչ և իցէ. Տիրոջ մատնեց Յուդան, դրդուած արծաթսիրութիւնից: Մեզ համար աւելի նշանաւորն այն է, որ երբ նա տեսաւ թէ ինչ հետեանք ունեցաւ իւր արած մատնութիւնն, այն է նորա վարդապետի մահուան պատճառ եղաւ— յուսահատեցաւ այնպէս, որ գնաց քահանայապետների մօտ, գցեց նոցա առաջ երեսուն արծաթն և յուսահատ զղջմամբ իւր վարմունքի մասին, որ քահանայապետների և Հրէից զպիրներին միայն ծաղրածութեան առիթ տուեց— հեռացաւ և խեղդամահ եղաւ: Ծառից ընկաւ նորա դին, նկատում է առաքելներից մէկը, ուռած պատառեցաւ և դուրս թափուեցան նորա փորոտիքը (Գործ. Առ. գլ. Ա. 18): Միւս տեղումն էլ նոյն առաքելը սառն խստութեամբ նկատում է Յուդայի մասին, որ Փրկչի խօսքերով լաւ էր որ աշխարհ չէր եկել՝ թէ այսպէս «Անկաւ Յուդայ ի պաշտամանէ առաքելութեան գնալ ի տեղի իւր» (Գործ. գլ. Ա. 25):

Բոլոր վերոյիշեալ ասածներից յետոյ ոչ մի կասկած չէ մնում, որ անձնասպանութիւնը հետեանք է յուսահատութեան, որ ծածկում է մարդոց աչքից Աստուծոյ գոյութեան գիտակցութիւնը, նորա արդարութիւնն և հատուցումն ապագայ կեանքում— յուսահատութեան, որ ինքն էլ պտուղ է մարդկային կամայականութեան, սիրոյ առ աշխարհ, սորա բոլոր անցտուր բարիքներով, պտուղ է լիացման նրանցմով և կամ՝ զչարութեան, որ չէ կարողացել նրանց լիապէս ձեռք բերել: Այս եզրակացութիւնը ուղղակի առաջ է գալիս երկու աստուածաշընչական անձնասպանների բնաւորութեանց նկարագրից, որ արած է Ս. Գրոց հիման վերայ: Եթէ այս ևս բաւական չէ անձնասպաններին սովորաբար անհաւատ, անձնասէր, նիւթական բարիքներով յղփացած, կշտացած և կամ մինչև ցոլսահատութիւն զչարած մարդիկ համարելու համար— աւելին ապացուցանելու համար դառնանք զէպի պատմութիւնը: Ի զուր չեն ասում, թէ պատմութիւնն ուսուցանում է: Սա էլ լիայում է, որ միշտ և ամենուրեք, ուր թագաւորել է անհաւատութիւն—

Աստուծոյ գոյութեան և ապագայ կեանքի վերաբերութեամբ, ուր նիւթականը հոգեւորից գերադաս համարուել է, միշտ և ամենուրեք շատ տարածուած է եղել անձնասպանութիւնն, այսպիսի է և ութուտասաներորդ դարն իւր կեղծ լուսաւորութեամբ, այսպիսի է եւ լուսաւորութեան ու բարոյական անկման մեր ժամանակը, այսպիսի էր մանուաւնդ հեթանոսութեան ժամանակը Քրիստոսի գալստից առաջ և յետոյ: Դէպի այս ժամանակը կդարձնեմ ձեր հայեացքը:

Ի՞նչպիսի պատկեր էր ներկայացնում հեթանոսութիւնը Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի աշխարհ գալու ժամանակ: Անհնարին է առանց զարհուրանքի կարդալ այն, ինչ որ գրում են նորա մասին մարդիկ, որոնք իրանց հետախուզութիւնքը նուիրած են այդ տխուր ժամանակին: Որովհետեւ ամեն մարդկային հասարակութեան անկումն բարոյականութեան վերաբերութեամբ անմիջապէս կախումն ունի նոյն հասարակութեան անկումից կրօնական հայեցողածքների վերաբերութեամբ, տեսնենք թէ որպիսի է հեթանոս Հռովմայեցիների կրօնական վիճակն Քրիստոսի ծննդեան մօտիկ ժամանակներում: Սուրբ Գիրքը վկայում է, որ մի Աստուածութեան գաղափարը մարդիկ կորցրին այն ժամանակից, երբ նոքա ցրուեցան երկրիս երեսին: «Ձի, ինչպէս ասում է իմաստունն (Սողոմոն), ընդունայն էին ամենայն մարդիկ բնութեամբ, յորս էր աստուածանգիտութիւն, և յերևելի բարութեանցն ոչ կարացին գիտել զայն որ էրն, և ոչ ի գործս հայեցեալ ծանեան ճարտարապետըն, այլ կամ զհօր կամ զհօղմ, կամ զօգերագ, զաստեղաց շրջանս կամ զջրոց բնութիւն կամ զլուսաւորս երկնաւորս» (Իմաստ. Սող. գլ. ԺԴ. 1—2), մի խօսքով անշունչ բնութիւնն, սորա մարդս ճշող զօրութիւններով հանդերձ, աստուածացուցանել սկսան: Իրաւ որ, բոլոր հին արեւելեան կրօններն ոչ այլ ինչ էին բայց եթէ բնութեան աստուածացուցումն և ինչպէս յաւիտեան միակերպ է այս բնութիւնն, նոյնպէս միակերպ էին և այս կրօններն, արդէն իրանց յղացման մէջ դատապարտուած լինելով անշարժութեան և անխփոխութեան: Բնական

է, որ մարդիկ տակաւ առ տակաւ անտարբեր դարձան այդպիսի կրօնների վերաբերմամբ: Երբ Ադէքսանդր Մակեդոնացին նուաճեց արեւելեան ազգերին, իւր իշխանութեան հետ տարածեց նոցա մէջ և յունական կրօնը: Ինչպէս մարդս շարժարարածոց պսակն է ստեղծագործութեան, նոյնպէս և Յոյների կրօնը, որոյ մէջ գաղափարական մարդը աստուածացրած է, պսակ է հեթանոս կրօնի, բայց գաղափարական մարդը՝ աստուածացրած Յունաց կրօնում, յայտնի բան է, պէտք է ունենար և յիշատակէր էլ բոլոր մարդկային թերութիւններն ու արատներն, այնպէս, որ և Օղիմպոսը—աստուածների բնակարանը—վերջի վերջոյ երևում է պատկեր բնական գոյութեան և Յունական ազգային կեանքի: Սուրբ Օգոստինոսի նկատմամբ յունական աստուածներն էին շնչաւորուած մարդկային կրքեր, որոնք այնքան աւելի յարգելի էին, որքան աստուածները ջանք էին առնում միմեանց գերազանցել արատների մէջ: Իրանք չարագործութեամբ շնչանաւոր, աստուածները բնականաբար նոյնը ուսուցանում էին և իրանց երկրպագուներին: Յունական քաղաքակրթութեան հետ Հռովմայեցւոց անցաւ և Յունաց բազմ աստուածութիւնը. բայց Հռովմայեցւոց աստուածներն այլ բնաւորութիւն ունէին: Հռովմայեցւոց առանձին ուշադրութեան, նոցա առանձին հոգացողութեան և յարգանաց առարկայն էր պետութիւնն և քաղաքական կեանքը: Այս նպատակին ծառայում էր և նոցա կրօնը: Կապիտոլիոնի Արամազդէն իսկապէս էր տէրութեան անձնաւորումն, գլխաւոր աստուածներն էին՝ Մարս—պատերազմի չաստուածը, և Վիկտորիա—չաստուածահին յաղթութեան, իբրեւ գլխաւոր գործիչներ Հռովմայեցւոց յաղթանակութեան բոլոր նոցա ժամանակակից ազգերի վերայ: Ուստի և երբ Հռովմայեցիք հասան կատարեալ զօրութեան, նոցա աստուածներն էլ, իբրեւ իրանց ծառայութիւնն արած աւարտածների, կարծես արձակուրդ ստացան: Արամազդի տեղը բռնեց Հռովմայեցւոց կայսրը, որ ողորմածութեամբ շնորհում էր Հռովմայեցիներին և այլ աստուածներ, իւր ազգականներին աստուծային արժանաւորութիւնք

յատկացնելով: Յունական կրօնը այլափոխուեցաւ և այսպէս՝ այլ ևս ոչ թէ գաղափարական, աւելի կամ պակաս օլիմպիական կեանքի գաղտնիքով ծածկած, մարդու աստուածացութեամբն հանդէս եկաւ, այլ սովորական հասարակ երբեմն և ամենաանպիտան մարդու աստուածացութեամբն: Հռովմայեցիք իրանց կատարեալ զօրութեան ժամանակ, մասամբ դժգոհ իրանց աստուածներէց, մասամբ էլ քաղաքական դիտաւորութեամբ ընդունեցին բոլոր իրանց կայսերութեան մասը կազմող ազգերի աստուածներին: Այս ամենէն ոչնչացրեց նոցա կրօնը: Հասարակ ժողովրդեան մէջ նա (կրօնը) փոխուեցաւ նախապաշարմունք, իսկ կրթութեամբ դասակարգի համար նա դարձաւ ծաղրի և կատակի առարկայ: Կիկերոնն ասում է, որ կենդանեաց փորձուիքով հմայողները նորա ժամանակ չէին կարողանում աւանց ծիծաղի միմեանց վերայ: Նայելէ, Թատրոններում և կրկէսներում յաճախ հանդէս էին բերուում իրանք աստուածները, բոլոր իրանց պակասութիւններով և անվայելուչ գործերով և ժողովուրդը բաւականութեամբ ծաղրում էր նրանց, որոնց տաճարներում զոհ էր բերում:

Առաջուց կարելի է երեւակայել, թէ այսպիսի կրօնական համոզմանց ժամանակ ինչպիսի էին Հռովմայեցւոց հասարակութեանց բարոյական գաղափարները: Հեթանոսութեան օտար էր մինչև անգամ ասպագայ կեանքի ներկայացումն, մարդու գոյութիւնը գերեզմանից դէնը: Նպատակն, որին նա ձգտում էր, նորա համար միշտ կայանում էր միայն այս աշխարհումս: Հին աշխարհի հեթանոսների կեանքը սահմանափակուած էր միշտ երկրաւոր երջանկութեան հոգսերով, երկրաւոր բարօրութեամբ: Խոնչպէս էր որոշուում այս նպատակը: Աւելի ազնիւ հոգիք որոնում էին միտիարութիւն և խաղաղութիւն ստոյիկեան փիլիսոփայութեան մէջ: Ստոյիկեան վարդապետութեան բարոյական գաղափարն այն էր, որ իմաստունն, որին միայն նա համարում էր թագաւոր, քուրմ և դատաւոր աշխարհի, սառն անտարբերութեամբ ենթարկուում է և հանդիպում անգութ բաղդի երկաթեայ անխուսելի ծանրութեան:

Սկզբում Ստոյկեանի արիութիւնը զարմանք է յարուցանում մարդուս մէջ. բայց այս զարմանքն անհետանում է, երբ յիշենք, որ այս արիութիւնն իսկապէս ոչ այլ ինչ է եթէ ոչ անչափ մեծամտութիւն: Ստոյկեանի արիութիւնը սառն է իբրեւ սառնամանիք և խաւար իբրեւ գերեզման. նա լոկ եռակա-
նութիւն է, զուրկ սէրից, ուստի և անընդունակ բուժելու և մխիթարելու: Գերեզմանի մօտ էլ նա ցոյց է տալիս նոյն անտարբերութիւնն երկաթեայ անխուսելի անհրաժեշտութեան վերաբերութեամբ: Անմահութիւնը նորա համար դատարկ ցնորք է, գեղեցիկ երազ: Այդ պատճառով էլ Ստոյկեանն այնպիսի անտարբերութեամբ բաժանուում է կեանքից և այնպիսի ուրախութեամբ նայում է մահուան վերայ, իբրեւ այս անել վիճակից միակ ապահով ելքի վերայ: Այս տխուր հայեցուածքներն էլի ամենալաւերն էին Քրիստոսի գալստից առաջ, իսկ մարդոց մեծ մասը, սոցա հեռու և ոմանք կրթուած-
ներէից անձնատուր էին եպիկուրէեան փիլիսոփայութեան, որոյ նշանաբանն էր, «ուտենք, խմենք և ուրախանանք, որովհետեւ եգուց կմեռնենք»: Ինչ էին այս հայեցուածքի ներկա-
յացուցիչները կեանքի մէջ, որոնք անձնատուր էին եղած կոպիտ զգայականութեան, ամենազազրալի զեղխութեան, կարե-
լի է տեսնել նոցա նկարագրութիւնից, որ արած է Պօղոս սրբա-
զան առաքելուն իւր թղթում առ Հռովմայեցիս. «Եւ զի, ա-
սում է Առաքեալը, փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ ի նմանութիւն, պատկերի եղծանելի մարդոյ, և թռչնոց, և չոր-
քոտանեաց, և սողնոց: Վասնորոյ մատնեաց զնոսա Աստուած ի ցանկութիւն սրտից նոցա ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց. . . . Եւ որպէս զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան՝ գործել զանարժանս, զլցեալն ամե-
նայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ազահութեամբ, չարութեամբ, լի նախանձող, սպանութեամբ, հեռիւ, նենգութեամբ, չարաբարութեամբ, շոգմոգք, չարա-
խօսք, աստուածատեացք, թշնամանողք, ամբարտաւանք, ամ-

բարհաւաճք, գտիչք չարեաց, զծնողս անարգուք, անմիտք, ուխտագրութք, անագորոյնք, աննուէրք, անողորմք» . (Հռովմ. Ա.) : Զկար յանցանք, որով հռովմէական հասարակութիւնն իրան արատաւորած չլինէր : Այն ժամանակուայ բարուց նկարագիրն, որ նոյն իսկ հեթանոսների գրչի ծնունդ է, ներկայացնում է տխուր և զարհուրելի պատկեր : Հռովմայեցի փիլիսոփայ Սենեքան իւր ժամանակի բարոյական վիճակի մասին ասում է . «Ամեն ինչ է եղեռնագործութեամբ և արատներով . յանցանքներ գործուում են աւելի, քան որքանը կարելի էր կարճել զօրութեամբ : Զարհուրելի մրցումն է լինում զեղիս անսանձութեան մէջ : Իւրաքանչիւր օր աճում է ձգտումն դէպի մեղք, ամեն օր նուազում է ամօթը : Կիրքն, որ մերժում է յարգանքը դէպի ամեն ինչ որ ընտիր ու սուրբ է, իրան չափ ու սահման չէ ճանաչում : Յանցանքն այլ ևս իրան չէ ծածկում, այլ աշկարայ հանդէս է դուրս գալիս ի ցոյց : Սանձարձակութիւնն այնպէս աշկարայ եղաւ և ամենքին տիրած է, որ անմեղութիւնն ոչ միայն հազուագիւտ է, այլ և բոլորովին անհետացել է» :

Նւ ահա այս հաւատոյ անկման կամ, աւելի լաւ է ասել, կատարեալ անհաւատութեան և սորա հետեանք բարուց անկման ու անզուսպ զեղիութեան ժամանակ, երբ կեանքը թըշուառութիւն էր թուում — լսում են յաճախակի և ճարտարաբան ձայներ յօգուտ անձնասպանութեան, իբրեւ անհրաժեշտ կարիքի : Զարժէ ապրել — առում է մարդկութիւնը — եւքն այս կեանքից հէնց մահն է : «Տեսնում ես, աղաղակում է գերիին, ոչ թէ մի հասարակ մարդ, այլ բարձր դիրք ունեցող փիլիսոփան, — տեսնում ես այն անդնդային լեառները, այնտեղից ներքեւ տանում է ճանապարհը դէպի ազատութիւն : Տեսնում ես այն ծալը, գետը, այն ջրհորը : Այնտեղ նոցա խորքում ընակում է ազատութիւնը : Տեսնում ես այն փոքրիկ չորացած ծառը, այնտեղ նորա վերայ կախուած է ազատութիւնը : Դու ունի՞ս պարանոց, սիրտ, կտրիր այն, ծակիր այս — սորա մէջ է ազատութիւնը ստրկութիւնից» : Կարելի է արդեօք աւելի

ճարտար խօսքերով քան վերոյիշեալներն առաջարկել մարդոց անձնասպանութիւնն իբրեւ լաւ եւ քանեւանելի վիճակից, եւ պէտք է ճշմարիտը խոստովանել, որ անձնասպանութիւնն այն ժամանակներն այնպէս ընդհանրացած էր, ինչպէս երբէք նոցանից յետ: Պօղոս առաքեալի խօսքով, նորա համար, որ այն ժամանակուան մարգիկ թողնելով ճշմարիտ Աստուծոյ, պաշտեցին արարածները, Աստուծոյ «մասնեաց պնաս ի ցանկաւիւնս քրից նոցա ի պլծոմիւնս և յայլ արարածս» Արդարեւ դորա համար նա թոյլ տուեց մարդոց անձնասպանութիւն գործել: Մարդկութիւնը ընկղմեցաւ մեղաց անդունդն և օրանով էլ ազատուելով կեանքի չարեաց դէմ պատերազմից, վերջապէս գտաւ իւր համար եւ ք այս կեանքից անձնասպանութեամբ:

Աստուծոյ Յայտնութեան և պատմութեան վկայութիւններէն արած մեր այս եզրակացութիւնն անձնասպանութեան մասին, իբրեւ հետեւանքի անհաւաքութեան և նիւթապաշտութեան և սահմանափակման կեանքի նպատակի լոկ ներկայ երկրաւոր կեանքով, հաստատուում է եւ վիճակագրութեան տեղեկութիւններով: Այսպէս քննելով անձնասպանութիւնը քրիստոնեայ ազգերի մէջ, որոնք տարբերուում են միմեանցից դաւանութեամբ, նա՛ն անձնասպանութիւնը, ամեն ընդարձակ տարածման ժամանակ ամենից յաճախ կատարուում է բողոքական ազգերի մէջ, յետոյ քաթոլիկներին և մեր բազմից ամենից քիչ արեւելեան եկեղեցիաց հետեւողների մէջ: Քննելով անձնասպանութիւնը միւսնոյն ազգի ղանադան դատակարգերի մէջ, կարելի է տեսնել, որ նա աւելի յաճախ կատարուում է կրթեալ մարդոց մէջ և շատ հազիւ հասարակ դասակարգի մէջ, որ աւելի ամուր է պահպանում եկեղեցու և հաւատոյ պատուիրանները, քան թէ լուսաւորեալ դասակարգի մարդոց մեծամասնութիւնն — աւելի յաճախ քաղաքներում ուր մարդս կարող է ամեն տեսակ աւելորդ բաների վարժուել, քան թէ գիւղերում, — աւելի յաճախ տղամարդոց մէջ, քան կանանց, որոնք իրանց սեռով պաշտպանուած են շատ այնպիսի բաներից, որոնք տղամարդիկ առանց խղճահա-

բռնութեան իրանց թոյլ են տալիս:

Իսաւնալով դէպի ներկայ դարս, մենք պէտք է կրկնենք այն, ինչ որ ասացինք սկզբում, թէ անձնասպանութիւնը մեր լուսաւոր դարում շատ տարածուած է և իցու սրտի յաճախ արժանանում է արդարանալու և ներողամտութեան հասարակաց կարծքի կողմից կամ գոնէ նորա ներկայացուցիչներին մամուլի մէջ: Անտարակոյս նորա տարածման պատճառներն ներկայումս էլ նոյնն են, ինչ որ միշտ եղել են: Միայն ներկայ դարիս լուսաւորութեան յառաջադիմութիւնն արել է անձնասպանութիւնն, ինչպէս և շատ այլ վնասակար վարդապետութիւնք, բարք ու լիարք, աւելի կամ պակաս սեպհականութիւն բոլոր ազգերի: Յիրաւի այժմ մենք էլ գրեթէ չենք կարող աւելի, որ անձնասպանութեանց թուի կողմանէ յետ եւր մնացել օտար ազգերից: Պատճառն ինչո՞ւմն է: Իժգադրաբար մեր դարի լուսաւորութեան ընաւորութեան մէջ է: Ես չեմ կամենում կոտրել, նուազեցնել լուսաւորութեան նշանակութիւնը մարդկութեան համար: Ես հասկանում եմ, որ ինքս էլ լուսաւորութեան եմ պարտական, որ պատիւ ունիմ հրապարակաւ այսօր իմ մտքերը յայտնելու: Բայց լուսաւորութեանց մէջ էլ զանազանութիւն կայ, երբ լուսաւորութիւնը ձգտում է ուրանալ Աստծուն և նորա տեղ դնել մարդկային ամբարտաւան միտքն, այդպիսի լուսաւորութիւնն որքան աւելի տարածուած է, այնքան էլ աւելի վնասակար է: Աստուած սէր է և բոլոր կեանքն պէտք է լինի սիրով առ Նա և առ մերձաւորս: Երբ մարդս յանուն իւր յառաջադիմութեամբ հպարտ մտաց, ուրանում է Աստծուն, նա ակամայ հեռանում է եւ սէրից, որ ղեկավարող սկզբունքն է կեանքի, և դառնում է սառն, չոր ու ցամաք, գործնական կամ ղեղխ անձնասէր: Իսկ առանց սիրոյ կեանքը, լինի սա ամենալուսաւորեալ մարդու կեանք, ոչ մի գին չունի, առանց ոգևորիչ սիրոյ նշանակութիւն չունին մարդուս ոչ սիրագործութիւնք, ոչ ընդունակութիւնք, մինչև անգամ մարգարէութիւնք, մինչև իսկ լեառները տեղից շարժող հաւատը: Լսեցէք Պօղոս Ա-

ռաքեալի այս մեծանշան խօսքերը. «Եթէ զլեզուս մարդկան
 խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև
 զպղինձ որ հնչէ, կամ իբրև զճնճղայս որ զօղանչեն: Եթէ ու-
 նիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն
 և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս
 մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ»
 (Ա. Կորնթ. գլ. ԺԳ. 1—3): Բայց ի՞նչպէս եղաւ, որ մեր ժա-
 մանակակից մարդիկ հրաժարուեցան սէրից, որոյ բարձր օրի-
 նակներն են մեզ համար թէ մեր կրօնի չիմնադիրը, թէ նորա
 վարդապետութիւնը տարածողներն և թէ նորա համար նահա-
 տակո՛ղ սրբերը: Ահա՛ ինչպէս. Աստուած պարգևեց մարդուն
 մտաց մեծ և պաղաքեւ զօրութիւն: Աստուածային այս շնոր-
 հաց զօրութեամբ մարդիկ յաջողեցան նիւթական աշխարհում
 մեծամեծ յաղթութիւնք տանելու՝ այն է ենթարկել իրանց շո-
 գու զօրութիւնը, սորա օգնութեամբ բազմացնել և արժա-
 նացնել բնութեան արդիւնաբերող միջոցները, հնարել աւելի
 յարմարաւոր ճանապարհները հաղորդակցութեան, որով հնա-
 րաւոր եղաւ փութով և հեշտութեամբ հասցնել մի ազգից
 միւսին եւ անհրաժեշտ պիտոյից առարկայք եւ արհեստից
 գանձերն եւ առհասարակ մարդկային մտաց բազմազան պը-
 տողները: Այս ամեն յառաջադիմութեանց հասնելով, մարդ-
 կութիւնը երեակայեց, թէ նորա զօրութեան ամենայն ինչ
 հնարաւոր է—նա եւ կարող է գիտենալ ամենայն ինչ եւ գոր-
 ծել: Նորից լսուեցաւ հին փորձիչ օձի շջոյճ՝ թէ «բանայցեն
 աչք ձեր, և լինիցիք իբրև զաստուածս» (Մննդ. գլ. Գ. 5):
 Մարդիկ ունին դրին այս ձայնին և ի՞նչ եղաւ: Ոչ միայն չբաց-
 ուեցան նոցա աչքերն, այլ ընդհակառակն — ծածկեցան
 մեծ կուրութեամբ: Ըստ որում, երբ միայն մարդիկ իրանք
 իրանց ասացին՝ եկէ՛ք ծառայենք և հաճոյ լինինք մարդկու-
 թեան, իսկոյն երևեցաւ, որ անհնարին է ամբողջ մարդկու-
 թեան ծառայել և հաճոյ լինել: Բայց երբ մարդ Աստուծոն ծա-
 ռայել չէ կամենում, իսկ մարդկութեան չէ կարողանում, այս-
 պիսի դէպքում նրան մի բան է մնում, այն է ծառայել և

հաճոյ լինել իւր անձին, եւ ահա ձկնորսացաւ ջանք և աշխատանք ոչ թէ Աստուծոյ, այլ մամոնայի համար: Մարդիկ ընտրեցին իրանց մի գաղափարական նպատակ, որին պէտք էր հասնել — այն է անձնական բարօրութիւնը, և այսպէս ամենքն ընկան բաւականութեանց ետեւից: Իրօք մարդիկ սկսան վայելել կեանքը միայն նորա համար, որ ուտեն, խմեն և ուրախանան: Հարուստները մոռացան, որ Աստուած նրանց հարստութիւն պարգևել է աղքատների վիճակը թեթեւացնելու համար. իսկ աղքատները մոռացան, որ հէնց նոցա աղքատութեան մէջ է յարմար միջոցը փրկութեան: Այստեղից ծագում են մեր բարեմիտ անձանց վշտացնող ժամանակակից ախտերը՝ այնպէս անուանեալ «սնկական»-ը: Հասարակական գումարների յափշտակութիւնքն և այլն. այստեղից ծագում է էլ անձնասպանութեան յաճախութիւնը, ոմանք անձնասպան են լինում ձանձրացած ներկայ շռայլութիւնից, այլք ձանձրացած չոր ու ցամաք կեանքից, որ զուրկ է գաղափարից և հատուցման յոյսից ապագայ կեանքում, որ զուրկ է կենսատու սէրից, հաւատից և սէրից առ ինքն Աղբիւրն ամեն գոյութեան — առ Արարիչն ու ստեղծիչն ամենայնի:

Գումար տալով մեր ասածներին, պէտք է համառօտապէս կրկնել, որ անձնասպանութիւնն, կատարուի նա խելագարութեան մէջ կամ առողջ դատողութեան միջոցին, հետեանք է, եթէ ոչ անաստուածութեան, անշուշտ չհաւատալուն Աստուծոյ, Սորա հատուցման ասպագայում և յաւիտենական կեանքի գոյութեան: Անաստուածի և անհաւատի մէջ զանազանութիւնն այն է, որ առաջինը հրապարակաւ չէ ճանաչում Աստուծուն — մինչդեռ երկրորդը, առանց այն հրապարակաւ ասելու, ապրում է այնպէս, որ նոյն իսկ իւր կենցաղավարութեամբ վկայում է թէ չէ ճանաչում Աստուծուն, որ Դատաւոր է և Հատուցանող: Կեանքում անաստուածութեան և անհաւատութեան հետեանքները մի և նոյնն են: Թէ մէկն և թէ միւսը, մերժելով ճշմարիտ Աստուծոյ գոյութիւնն, արտայայտուում են մարդկային կրքերի կռոց ծառայելու մէջ: Սո-

րա համար, ըստ Պօղոս Առաքելի, Աստուած անհաւատներին մատնում է ի պիտիւն (Հռովմ. գլ. Ա. 24) և յաջնայն աշարհ, որոց հետեանքը լինում է վերջի վերջոյ անձնասպանութիւնը։ Ուրեմն անձնասպանութիւնն է կարծես պսակ անաստուած և յանցաւոր կենցաղաւարութեան, նա ինքն ըստ ինքեան ծանր մեղք է, որ ոչ կարելի է ներել և ոչ էլ արդարացնել։ Նա դատապարտած է Աստուծմէ, հակառակ է Յայտնութեան վարդապետութեան և միշտ օտար է եղել ճշմարիտ արդարներին։

Բայց որպիսի միջոցներ կարելի է ցոյց տալ պատերազմելու համար այն գայթակղութեանց դէմ, որոնք առաջնորդում են դէպի անձնասպանութիւն։— Ըստ որում նա հետեանք է անհաւատութեան առ Աստուած և յանցաւոր կեանքի, ուստի և կենդանի հաւատն յԱստուած և կենցաղաւարութիւնն համաձայն նորա պատուիրանաց և եկեղեցւոյ պատուէրներին են ամենհաստատ ճշմարիտ պատուարը անձնասպանական գայթակղութեանց դէմ։ Ով մտքով միայն չէ խոստովանում Աստուծոյ գոյութիւնն, այլ և սուրբ սրտով զգում է նորա մերձաւորութիւնն, այդպիսի անձն երբէք չի մոռծիլ զրկելու իրան կեանքից, որ Աստուծոյ ամենլնտիր պարգևն է։ Ով որ կեանքը համարում է Աստուծային այն գաղափարի իրագործումն թէ՛ եղէք կատարեալ, ինչպէս որ Ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է, այդպիսին էլ երբէք չի մոռծիլ ազատուելու մասին կեանքից, որքան էլ սա երկարատեւ լինէր, կատարելապէս համոզուած լինելով, որ երբէք մեզ չի յաջողիլ կատարեալ չափով իրագործել այն (կեանքը) այս երկրիս երեսին։ Եթէ հաւատացեալին տառապեցնում է իւր յանցաւորութեան գիտակցութիւնը, նա մխիթարուում է այն մտքով, որ Աստուած եւ աշխարհ եկաւ մեղաւորների փրկութեան համար, եթէ աշխատանքն ու ծանր բեռն մասն և բաժին ընկել են նրան այս կեանքում, նա յոյս է տածում հանգիստ գտնելու Աստուծմէ, եթէ նա համարում է իրան այս աշխարհումս խեղճ և թշուառ և Պօղոս առաքելոյ նման կցանկար ազատիլ

մահկանացու մարմնոյ շղթաներից, այն ժամանակ էլ նա եղեռնագործութեամբ ինքն իրան չէ զրկում կեանքից, այլ սպասում է, մինչև որ Տէրն ինքը կկոչէ նրան իւր մօտ և կհանգուցանէ իւր օթեաններում:

Իայց զօրեղ է թշնամին և յայտնի բան է ոչ ոք պատասխարուած չէ ամենատեսակ գայթակղութեանց դէմ, ի միջի այլոց և անձնասպանութեան գայթակղութիւնից: Ինքն արդար Յօրն էլ գայթակղուում էր անձնասպան լինելու, ինչպէս տեսանք, եթէ մէկը ձեռնից ենթարկուի այս գայթակղութեան, թող դիմէ ջերմեռանգ աղօթից ի խորոց սրտի, իրանից այդ զարհուրելի գայթակղութիւնը հեռացնելու համար: Աղօթքն և պահքն, այսինքն չափաւոր, աշխատասէր կենցաղաւարութիւնն, ըստ բանից Յիսուսի Քրիստոսի, միակ միջոցներն են իրանից սատանային հեռացնելու համար, սորա բոլոր փորձութիւններով և գայթակղութիւններով հանդերձ: Յիշեցէք Յիսուս Քրիստոսին, որ անապատում ինքն էլ պահքով և աղօթքով յաղթեց փորձութեան, աղօթքով մինչև ցորեան քրտինք ճնշեց իւր մէջ փորձութիւնքն կեանքում: «Մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն» — տէրունական աղօթքի այս խօսքերը միշտ մեր շրթանց վերայ պիտի լինին և այն մարդու սրտում, որ գայթակղուում է դէպի անձնասպանութիւն: Հետեւեցէք նոյնպէս Աստուծոյ սուրբերին, և արդարներին, որոնք աշխատասիրութեամբ և աղօթքով հեռացնում էին իրանցից գայթակղութիւնները: Սուրբ Անտօնի վերայ, որ հիմնադիրն էր կրօնաւորութեան արեւելքում, պատմւում են, որ բնակելով անապատում, նա շատ փորձութեանց և գայթակղութեանց ենթարկուեցաւ: Մի անգամ նա, թուլանալով պատերազմում իւր անձի դէմ, յանկարծ տեսնում է իւր առաջին իր նման մի մարդ. սա սկզբում նստած աշխատում էր, յետոյ վեր կացաւ աղօթելու և աղօթքը վերջացնելից յետ էլի նստաւ աշխատելու: «Արա՛ այսպէս և կփրկուիս» ասաց Անտօն ճգնաւորին Աստուծոյ հրեշտակն:

Իսկ ձեզ, եղբարք, որ անձնասպանութիւնը եղեռնագործու-

Թիւն էք համարում և հակառակ վարդապետութեան ֆրիստոսի, որոյ հետեւողներ էք ձեզ ճանաչում, ձեզ ես մի խրատ, մի խորհուրդ եմ տալիս, մի խնդիր անում — նոյնն, ինչով ես սկսեցի իմ քարոզս, այն է յանուն սիրոյ առ կորնչող մերձաւորս ձեր, դատապարտեցէք, յանդիմանեցէք, չարաբանեցէք անձնասպանութիւնը թէ կատարուելիս թէ մտածման և թէ փորձոյ առարկայ լինելիս, Յիշեցէք, որ մինչև անգամ ամեն բարի դիտաւորութիւն իւր մերձաւորի հոգին փրկելու վերաբերմամբ գին ունի յաչս Աստուծոյ, իսկ ով որ, իբրև բարի և հաւատարիմ ծառայ Աստուծոյ, կազատէ իւր մերձաւորին անձնասպանութիւնից և նրան կռնէ առաքինի կենցաղավարութեան ճանապարհի վերայ, այնպիսին մեծ կրկոչուի երկնից արքայութիւնում:

(Թարգմ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ:

Ցարական ուսումնարանի երկու լծակները կազմում են՝ իրազնութիւնն *) ու լեզուն: Մենք տեսանք, թէ Բէնը ինչ է վարդապետում իրազնական ուսման մասին. ոչ նուազ հետաքրքրական է իմանալ նորա տեսութիւնը նա և լեզուի ուսումնասիրութեան նկատմամբ, որ և հարկ ենք համարում մեր ընթերցողներին ծանուցանել ընդարձակ քաղաածքներ հանելով նոյն հեղինակի «Մանկավարժութիւնից»:

(*) Անցեալ դեկտեմբեր ամսի «Արարտառում» ծանուցուած էր, թէ «իրազնական դասերը» չարաճակիչ են, որովհետեւ շարունակութիւնը վերաբերութիւն ունի թէ իրազնական գասերի եւ թէ լեզուի, ուստի այս նոր յօդուածի վերջը մի յառաճ կը կցենք, որով երկու յօդուածները միանգամայն կը լրանան: